ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 06 28 02

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

# Սյունյաց երկիր

ՇԱԲԱԹ
28 ՀՈՒՆԻՍԻ 2014Թ. № 15 (323)

www.syuniacyerkir.am

## Լրացավ 1-ին բանակային կորպուսի հիմնադրման 18-րդ տարեդարձը

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿ

**Հունիսի 20-ին Գորիսի Գրիգոր Տաթեւացու անվան հրապարակում հանդիսավորությամբ նշվեց 1-ին բանակային կորպուսի հիմնադրման 18-րդ տարեդարձը:**

Հանդիսավոր արարողությանը մասնակցում էին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՊՆ բարձրաստիճան զինվորականներ, Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը, ԵԿՄ Սյունիքի մասնաճյուղի նախագահ Սուրեն Խաչատրյանը, Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանը, Գորիսի նորընտիր քաղաքապետ Վաչագան Ադունցը, հյուրեր, քաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ:

Հրապարակ էին դուրս բերվել 1-ին բանակային կորպուսի ռազմական տեխնիկայի եւ սպառազինության նմուշներ:

Զինվորական նվագախմբի հանդիսավոր երաժշտության ներքո ներս բերվեց բանակային կորպուսի մարտական դրոշը:

1-ին բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանը ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին զեկուցեց միջոցառման անցկացման պատրաստության մասին:

Միտինգի բացման խոսքով հանդես եկավ զորամիավորման հրամանատարի տեղակալ, գնդապետ Վահրամ Հարությունյանը:

Հնչեց ՀՀ պետական օրհներգը:

1-ին բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանն իր ելույթում ներկայացրեց կորպուսի անցած մարտական փառավոր ուղին՝ հավաստիացնելով, որ այսօր զորամիավորումը պատրաստ է ցանկացած մարտական առաջադրանք կատարելու:

- 1-ին բանակային կորպուսը կազմավորվել

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 4

## Եվս մեկ հիշեցում Հրաչ Զաբրայանին

Հայրենասիրությունը նախեւառաջ գործ ու առինքնող վարք է ենթադրում, իսկ հռետորաբանության վրա կարելի է եւ ժամանակ չվատնել

Անդրադարձ

**Ս.թ. ապրիլի 22-ին «Սյունյաց երկրում» հրապարակվեց մեր հեղինակած հոդվածը՝ «Թե ինչ է լինում հետո, երբ «հայրենասիրություն» բառը դարձնում են ծամոն եւ շիրմա»: Հոդվածը «Դանդի փրիշս մեթալս Կապան» ընկերության տնօրեն Հրաչ Զաբրայանին՝ լրագրողների հետ ապրիլի 10-ին տեղի ունեցած հանդիպման ընթացքում մեր կողմից ուղղված հարցերի ու նրա պատասխանների մասին էր:**

Հանդիպմանը հնչել էր նաեւ այսպիսի հարց. *«Պարոն Զաբրայան, ի՞նչ նպատակով կրճատեցիք Ձեր ընկերության ավտոհավաքակայանը: Հետաքրքիր է՝ այդ «բարեփոխմամբ» ընկերությունը որքա՞ն շահույթ է ստանում ամսական (եւ արդյո՞ք ստանում է), այդ «բարեփոխմամբ» քա նի՞ մարդ աշխատանքից զրկվեց»:*

Տնօրենն այսպիսի պատասխան տվեց. *«Չէ, հաստատ ընկերությունը ոչ մի բան չկորցրեց: Ի վերջո մենք հանքարդյունաբերական ընկերություն ենք: Եվ մեր հիմնարկը պետք է կենտրոնանա անվտանգ հանքարդյունաբերության վրա: Ավտոբուսները, որ տեղափոխում էին մեր աշխատողներին, տարիներ ի վեր գործել են նույն ոճով: Մեր վարորդներն այնքան էին հմտացել, որ նույնիսկ ավտոբուսների տակ ավելորդ բաքեր էին տեղադրել, գալիս էին ընկերության տարածքում դիզվառելիք լցնում, տանում քաղաքում վաճառում, մի բան, որ որեւէ տնօրեն չպիտի հանդուրժեր: Այդ ավտոբուսները մենք վաճառեցինք. գնորդը կապանցի է, Կապանի մեջ ստեղծվեց վեց-յոթ աշխատատեղ: Նույն սերվիսը տասը օրվա ընթացքում կարողացանք տրամադրել մեր աշխատավորներին»:*

Մեր ճշտող հարցին՝ *«Արդյո՞ք դա նշանակում է, որ հավաքակայանը վերացնելու պատճառը նաեւ վարորդների գողությունն էր»,* նա պատասխանեց՝ *«Դա թողնում եմ Ձեր ենթադրությանը»:*

…Պարզվում է՝ մեր հարցուպատասխանի այդ դրվագը շարունակություն է ունեցել բոլորովին այլ դրսեւորումներով, ինչի մասին հունիսի 12-ին պատմեց կոմբինատի այլեւս

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 5

## Օ՜, դո՛ւ, պատահմամբ սերտած մտքերի Մի խղճուկ գերի՝ Դարձած կրեսին-

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

## Իրան-Հայաստան երկաթուղու կառուցման հարցն արդիական է

Իրան-Հայաստան երկաթուղու կառուցման հարցը բավականաչափ կարեւոր է, հունիսի 18-ին Երեւանում լրագրողներին հայտնեց Ռե նախագահ Վլադիմիր Յակունինը:

Ըստ նրա՝ ներկա պահին իրանական կողմը դիտարկում է «Հյուսիս–հարավ» երկաթուղային միջանցքի Կազվին (Իրան) - Ռեշտ (Իրան) - Ասթարա (Ադրբեջան) հատվածի կառուցման ավարտի հավանականությունը:

Նա նշեց, որ իրանական տարածքում գործնականորեն բոլոր աշխատանքները կատարված են, եւ ենթադրվում է, որ Ռուսաստանի ու Իրանի միջեւ երկկողմ համաձայնագիր, ինչպես նաեւ երկաթուղային ընկերությունների մասնակցության վերաբերյալ եռակողմ փաստաթուղթ կստորագրվի:

**«Այդ տեսանկյունից այս հարցը բավականին արդիական է, այդ թվում՝ հանրապետության նախագահի կարծիքով: Ամենայն հավանականությամբ մենք հիմա պետք է կենտրոնանանք դեպի Հայաստան Աբխազիայի եւ Վրաստանի տարածքով շարժում բացելու հարցը»,** – ասաց Յակունինը:

Հյուսիս-հարավ (Իրան-Հայաստան) երկաթուղին թույլ կտա, որ հայկական կողմն օգտվի էներգառեսուրսների եւ այլ ապրանքների տեղափոխման այլընտրանքային ճանապարհից՝ ելք ունենալով դեպի արտաքին աշխարհ: Ավելի վաղ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Վիկտոր Ռեբեցը հայտնել էր, որ Իրան-Հայաստան երկաթուղու շինարարությունը կարող է սկսվել 2016 թվականի կեսերից:

Հայաստան-Իրան երկաթուղու կառուցման ծրագիրը գերակայություն է Հայաստանի համար: «Հայաստանի հարավային երկաթուղի» եւ «Հայաստանի հարավային արագընթաց երկաթուղի» նախագծերի գործարկման մասին հայտարարվել էր 2013 թվականի հունվարին: Նույն ժամանակ էլ ստորագրվել էր Հայաստանի հարավային երկաթուղու զարգացմանն ուղղված տարածաշրջանային համագործակցության փոխըմբռնման եռակողմ հուշագիրը՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի, Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարարության եւ «Ռոսիա ՖԶԷ» ընկերության միջեւ:

Ծրագրվում է, որ երկաթուղու կառուցումը կիրականացվի վեց տարում: Նախագծի արժեքը գնահատվում է 3.5 մլրդ դոլար: Հայաստանի տարածքում երկաթուղու ընդհանուր երկարությունը կկազմի 305 կմ: Այն կունենա 19.6 կմ ընդհանուր երկարության 86 կամուրջ եւ 102 կմ ընդհանուր երկարության 60 թունել: Շինարարությունը, ըստ ծրագրի, կավարտվի 2022 թվականին:

Ինչպես ավելի վաղ հայտնել էր տրանսպորտի եւ կապի նախարարության մամուլի ծառայությունը, ենթադրվում է, որ երկաթուղով Գագարին կայարանից (Գեղարքունիքի մարզ) մինչեւ Ագարակ (Սյունիքի մարզ) բեռնափոխադրումների ծավալը կկազմի տարեկան 25 մլն տոննա: Այդ երկաթուղին, որը նախկինում ծրագրված Գավառ-Ագարակ հատվածից 44 կմ-ով կարճ է, կմիացվի գոյություն ունեցող երկաթուղային ցանցին:

**18.06.2014, arka.am**

*Եսողորմյա*

# «Որոտանի» որոկը

Մեր ունեցած տեղեկություններով՝ կառավարությունը չափազանց մոտ է «Որոտան հիդրոկասկադի» վաճառքի գործարքը չեղյալ համարելուն: Ըստ այդմ՝ վերջնական որոշումը դեռ չի կայացվել, բայց դա կարող է տեղի ունենալ ցանկացած պահի:

Այս տարվա հունվարի 29-ին Երեւանում ամերիկյան «Կոնտուր գլոբալ հիդրոկասկադ» ընկերության եւ ՀՀ կառավարության միջեւ կնքվեց պայմանագիր, ըստ որի՝ ամերիկյան ընկերությունը 120 մլն դոլար էր վճարելու Որոտանի հիդրոկասկադի համար ու եւս 70 միլիոն դոլարի ներդրում պետք է աներ: Գործարքը, ըստ այդ պայմանագրի, պետք է ավարտված լիներ մինչեւ ապրիլի կեսը, սակայն մինչ օրս այն չի ավարտվել, եւ գումարը վճարված չէ: Ո՛չ ամերիկյան կողմը եւ ո՛չ էլ ՀՀ կառավարությունը սպառիչ բացատրություններ չեն տալիս, թե ինչ խնդիրներ են ծագել: Կառավարությունից ստացվող ոչ պաշտոնական տեսակետի համաձայն՝ գործարքը չեղյալ համարելն իրականում ոչ թե տնտեսական, այլ արտաքին քաղաքական եւ ներիշխանական դրդապատճառներ ունի: Խնդիրն այն է, որ դա Հայաստանի էներգետիկ համակարգի միակ օբյեկտն է, որը պետք է ձեռք բերեր ոչ ռուսական ընկերություն: Այս գործարքը բացասական է գնահատել նաեւ Ռոբերտ Քոչարյանը, որի հեղինակած չափազանց կասկածելի գործարքներով ժամանակին օտարվել են էներգետիկ խոշոր օբյեկտներ:

**www.armtimes.com**
**24 հունիսի 2014թ.**

# Ռոբերտ Քոչարյանի բացառիկ հարցազրույցը Yerkir.am-ին

(հատված)

ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը պատասխանել է Yerkir.am-ի հարցերին:

**– Պարո՛ն Քոչարյան, մոտ երկու շաբաթ առաջ ընդդիմադիր քառյակը հրապարակեց իշխանություններին ուղղված 12 պահանջը: Կարծում ենք՝ ծանոթ եք դրանց բովանդակությանը: Այդ խնդիրներից մի քանիսին Դուք այս կամ այն կերպ արդեն անդրադարձել եք: Հետաքրքիր է իմանալ Ձեր կարծիքն ընդդիմության մի քանի այլ՝ այսօր ամենաշատը քննարկվող պահանջների մասին: Թերեւս սկսենք «Որոտան» ՀԷԿՀ-ի սեփականաշնորհումից: Այս «գործարքի» վերաբերյալ բաց հարցերն այնքան շատ են (նաեւ Yerkir.am-ի բացահայտումները), որ դժվար է սկսել կոնկրետ ինչ-որ հարցից, ուստի կխնդրեմ Ձեր ընդհանուր գնահատականն այս ամենին:**

– Այդ գործարքի մեջ միակ դրական հանգամանքը ՀՀ էներգետիկայում ամերիկյան ընկերության նեգրավումն է: Մնացածը որեւէ կերպ չի տեղավորվում սթափ մտածողության սահմաններում: Հայաստանի էլեկտրագեներացիայի ամենագրավիչ միավորը վաճառվում է ծայրահեղ կասկածելի ձեւով՝ անտեսելով օրենսդրության պահանջները (շրջանցելով խորհրդարանը): Փաստորեն, «Որոտանի ՀԷԿՀ» ՓԲԸ-ի բոլոր էներգետիկ օբյեկտները վաճառվել են գույքի օտարման եղանակով: Այնպես, ասես վաճառվում է ընկերության հնացած գրասենյակային կահույքը: Ընդ որում՝ առք ու վաճառքի համաձայնագիրն անթույլատրելիորեն ասիմետրիկ է, անտեսում է ՀՀ շահերը եւ չափազանց խոցելի է դարձնում մեր հանրապետությունը բոլոր հնարավոր դատական վեճերում: Ակնհայտ է նաեւ, որ «Որոտանի» վաճառքն այս պայմաններով կհանգեցնի էլեկտրաէներգիայի սակագների բարձրացման, իսկ դա նշանակում է, որ չինովնիկների սխալների (կամ անկշտության) դիմաց վարձահատույց է լինելու ամբողջ Հայաստանը: Տպավորություն է ստեղծվում, որ հայկական կողմը համաձայնագրի մշակմանն առհասարակ չի մասնակցել, կամ էլ ընթացել է համաձայնեցված խաղ մեկ (հայկական) դարպասի ուղղությամբ: Քանի դեռ ուշ չէ, հարկ է լրջորեն վերանայել համաձայնագիրը կամ ընդհանրապես հրաժարվել վաճառքից: Գործարքի անօրինականությունն այնչափ ակնհայտ է, որ դրան առնչություն ունեցած անձինք դժվար թե խուսափեն պատասխանատվությունից, դա զուտ ժամանակի հարց է: Գնորդի համար էլ սա չափազանց կասկածելի (գնման ձեւի իմաստով) ձեռքբերում է:

**Հարցազրույցը՝ Ագնեսա Խամոյանի**
**yerkir.am, 23.06.2014թ.**

# Արմեն Մովսիսյանի խոսքովանությունը

**ՀՀ Էներգետիկայի նախկին նախարար Արմեն Մովսիսյանը Tert.am-ի հետ զրույցում անդրադարձել է Որոտանի հէկերի վաճառքի վերաբերյալ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հայտարարությանը:**

**– Պարո՛ն Մովսիսյան, ՀՀ 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանն իր հարցազրույցում անդրադարձել է Որոտանի հէկերի մասնավորեցման գործընթացին՝ այն որակելով որպես «վաճառք ծայրահեղ կասկածելի ձեւով (շրջանցելով խորհրդարանը)»: Դուք, որպես էներգետիկայի նախկին նախարար, ով իր պաշտոնավարման ժամանակ անմիջական մասնակցություն է ունեցել գործընթացին, ինչպե՞ս կմեկնաբանեք այդ անդրադարձը:**

– Ես բազմիցս առիթներ եմ ունեցել հրապարակավ խոսելու Որոտանի հէկերի մասնավորեցման գործընթացի մանրամասների մասին թե՛ խորհրդարանի ամբիոնից, թե՛ բազմաթիվ հարցազրույցների միջոցով: Իրոք, «Որոտանի» գործարքում մասնավորեցվում է գույքային համալիրը, եւ սա ամենեւին էլ առաջին նախադեպը չէ մեր երկրում, երբ մասնավորեցվում է գույքային համալիրը, ոչ թե ընկերությունը եւ որ այդ համալիրը մասնավորեցվում է կառավարության համապատասխան որոշումներով: Այսպես, 2003 թվականին Հայաստանի իշխանությունները մասնավորեցրել են «Սեւան-Հրազդան կասկադ» ՓԲԸ եւ «Հրազդանի ՋԷԿ» ՓԲԸ գույքային համալիրները: Նշված դեպքերում գործընթացներն իրականացվել են առանց խորհրդարանի, որոշումներն ընդունվել են կառավարության կողմից եւ, համաձայն այդ ժամանակ գործող Սահմանադրության պահանջի, վավերացվել են գործող նախագահի կողմից: Այդ գործարքների նկատմամբ քննադատություն, մեր օրերում, կարծես թե չի հնչում: Կարծում եմ՝ զուտ մտահոգ տրամաբանության հարթությունում այս փաստը մի փոքր դժվար է բացատրել, քանի որ իդեոնտիկ նույն սկզբունքով կատարված գործարքներից երրորդը չի կարող զարմանալի լինել, իսկ առաջին երկուսը՝ ոչ, հետեւաբար բացատրությունը պետք է փնտրել բոլորովին այլ դաշտում:

**– Պարո՛ն Մովսիսյան, Ռոբերտ Քոչարյանը նշում է նաեւ, որ առք ու վաճառքի համաձայնագիրն անթույլատրելիորեն ասիմետրիկ է, այսինքն՝ անտեսում է ՀՀ շահերը եւ չափազանց խոցելի է դարձնում մեր հանրապետությունը բոլոր հնարավոր դատական վեճերում, իսկ վաճառքն այս պայմաններով կհանգեցնի էլեկտրաէներգիայի սակագների բարձրացման: Ի՞նչ կասեք այս մասին:**

– Համաձայն չեմ այն կարծիքի հետ, թե համաձայնագիրն ասիմետրիկ է: Իմ կարծիքով Հայաստանի շահերը բավականին ամուր են ներկայացված, իսկ եթե նույնիսկ կան 1-2 թույլ կետեր, որոնք միգուցե մենք չենք նկատել բանակցելիս, ապա գործարքը դեռեւս փակված չէ, եւ դրանք հանգիստ կարելի է շտկել: Չթվարկեմ, բայց Հայաստանի կողմից տարիներ ի վեր կնքված ցանկացած պայմանագրում կարելի է գտնել թույլ կողմեր: Ինչ վերաբերում է սակագնի բարձրացմանը, բնականաբար, 180 մլն դոլարով վաճառքի դեպքում այն կազդի սակագնի վրա: Բայց չէ՞ որ մասնավորեցման ցանկացած գործարք տասնամյակներ շարունակ ազդել ու բոլոր նորերը դեռ ազդելու են սակագնի վրա՝ անմիջականորեն կամ շղթայավորված, մեկն՝ անմիջապես, մյուսը՝ ժամանակի ընթացքում: Եվ սա հանրահայտ ճշմարտություն է:

**yerkir.am, 24.06.2014թ.**

# Երկարաձգում են Որոտանի հէկերի էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիայի ժամկետը

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը երկարաձգում է «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության N0004 լիցենզիայի գործողության ժամկետը մինչեւ 2029 թվականի հունիսի 18-ը: Լիցենզիայի երկարաձգման որոշման նախագիծը հանձնաժողովի հունիսի 18-ի նիստի օրակարգում էր:

Հիշեցնենք, որ սույն թվականի օգոստոսի 1-ից էլեկտրաէներգիան թանկանալու է, ինչը պայմանավորված է էլեկտրաէներգետիկական համակարգում 2014-2015թթ. ընթացքում նախնական գնահատմամբ առաջացող շուրջ 20 մլրդ դրամ ֆինանսական ճեղքվածքը փակելու անհրաժեշտությամբ: Էլեկտրաէներգիայի գնի բարձրացման պատճառներից մեկը Որոտանի հիդրոէլեկտրակայանների կողմից էլեկտրաէներգիայի ցածր արտադրողականությունն է:

«2013-2014թթ. ընթացքում՝ ա) «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի տուրբիններից մեկը վթարային կանգառի պատճառով աշխատանքի է դուրս եկել 88 օր ուշացումով եւ սակագների հաշվարկներով նախատեսվածի համեմատ քիչ է արտադրել մոտ 300 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, բ) ջրասակավության հետեւանքով «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» եւ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների կողմից սակագների հաշվարկներով նախատեսվածի համեմատ քիչ է արտադրվել մոտ 200 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այս կայաններին կողմից թերմատակարարված էլեկտրական էներգիան փոխարինվել է «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ի թանկ էլեկտրական էներգիայով: Գործող սակագների հաշվարկներով նախատեսվածի նկատմամբ 2013-2014թթ. փաստացի էլեկտրական էներգիայի արտադրության կառուցվածքի նշված եւ այլ փոփոխությունների հետեւանքով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն կրել է շուրջ 16,3 մլրդ դրամի վնաս», - տեղեկացնում է հանձնաժողովը:

**http://www.ecolur.org/**
**18 հունիսի 2014թ.**

# ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ. «Որոտանի հիդրոկասկադի վաճառքը կոռուպցիոն եւ հակաօրինական է»

Ազգային ժողովի հայտարարությունների ժամին ՀԱԿ խմբակցության քարտուղար Արամ Մանուկյանն անդրադարձավ Որոտան հէկին՝ նշելով, որ Որոտան հէկը վաճառվել է չորս կոպիտ խախտմամբ: Ներկայացնելով հէկի վաճառքի խախտման մանրամասները՝ Արամ Մանուկյանն ասաց. *«Ներկայացնում եմ չորս խախտում, որոնք հիմնավորում են Որոտանի հիդրոկասկադի վաճառքի կոռուպցիոն եւ հակաօրինական լինելը: Ուզում եմ նաեւ շեշտել, որ մեր պայքարն ընդդեմ այդ անօրինական գործարքի պայմանավորված է ոչ թե նրանով, որ մեզ դուր չի գալիս ամերիկյան ընկերությունը, այլ որ սրանով տեղի է ունենում պետական գույքի ուղղակի կողոպուտ՝ ուղեկցված մեր ստրատեգիական ջրային պաշարների զավթմամբ եւ հայ-իրանական հարաբերությունների վտանգմամբ: Հիմա մանրամասնեմ. 1. վաճառքի գինը. հիդրոկասկադը վաճառվել է 180 մլն դոլարով, այն դեպքում, երբ դրա իրական արժեքը մոտ, համեստ հաշվարկներով, տասը անգամ ավելի է: Սրան գումարած՝ երեք հէկերի, դրանց սպասարկող դերիվացիոն թունելների եւ այլ ենթակառուցվածքների արժեքը: Սրանք ապացույցներ են առ այն, որ կոռուպցիոն ճանապարհով տեղի է ունեցել ազգային հարստության խայտառակ մասշտաբների կողոպուտ, ինչը ծանր քրեական հանցագործություն է: 2. Ջրամբարների օտարման անօրինականությունը. Հայաստանի ջրային օրենսգրքի 4-րդ հոդվածի, ինչպես նաեւ «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն, Ջրի ազգային ծրագրով սահմանված պետական նշանակության ջրային համակարգերը պետական սեփականություն են եւ մասնավորեցման ենթակա չեն»: «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն Սպանդարյանի եւ Տոլորսի ջրամբարները իմպերատիվ ձեւով ա. պետական սեփականություն են, բ. մասնավորեցման ենթակա չեն: Սա լրիվ բավարար է ջրային օրենսդրության կոպտագույն խախտումն արձանագրելու համար: 3. Իրանի հետ կապված խնդիրը. հիդրոկասկադի վաճառքի վերաբերյալ պայմանագրի 4.03 հավելվածում սահմանված է, որ Որոտանի ենթակառուցվածքները չեն կարող օգտագործվել Իրանի հետ էլեկտրամատակարարման գործընթացներում: Սա վկայում է, որ գործ ունենք նաեւ քաղաքական գործարքի հետ: 4. Ազգային ժողովը շրջանցելը. «Սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի համաձայն, Որոտանի հիդրոկասկադի մասնավորեցման նախագիծը պետք է ներկայացվեր Ազգային ժողովի հաստատմանը, ինչը չի արվել: Այն մեկ անգամ արդեն ներառված է եղել մասնավորեցման ծրագրերում, սակայն հետագայում հանվել է: Սա լրացուցիչ ապացույց է այն մասին, որ այսպիսի գույքի օտարման նախագիծը պարտադիր կարգով ենթակա է Ազգային ժողովի հաստատմանը: Այսպիսով, ամփոփելով նշեմ, որ այս գործարքում առկա են կոռուպցիոն բնույթի հանցագործության հատկանիշներ: Այն է. 1. վաճառքի ակնհայտ ցածր գինը, 2. օրենքի պահանջի ուղղակի խախտմամբ իրականացված ջրամբարների մասնավորեցումը, 3. առանց Ազգային ժողովի հաստատմանը ներկայացնելու պետական գույքը մասնավորեցնելը: Հետեւապես, ես ՀՀ գլխավոր դատախազությանը ներկայացնում եմ հանցագործության մասին հաղորդում՝ Որոտանի հիդրոկասկադի վաճառքի վերաբերյալ գործարքում կոռուպցիոն ռիսկերի առկայության մասին եւ հետեւողական եմ լինելու այս գործի պատշաճ քննության հարցում»,* – ասաց Մանուկյանը:

**Newsbook.am, 10 հունիսի 2014թ.**

## Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել

# Հունան Ավետիսյանի հոբելյանը

Այս տարի լրանում է Խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյանի ծննդյան 100 տարին: Ինչո՞վ է մեր հայրենակիցն արժանացել այդ բարձր կոչման: 1943-ի սեպտեմբերին ռազմաճակատի ողջ երկայնքով ծանր մարտեր էին ընթանում, մանավանդ Նովոռոսիյսկ քաղաքի եւ Թաման թերակղզու ազատագրման համար: 1943-ի սեպտեմբերի 16-ին այն զորամասին, որի կազմում էր Հ.Ավետիսյանի դասակը, հանձնարարվեց ճեղքել Նովոռոսիյսկի մատույցները փակող Դոլգայա լեռը եւ ճանապարհ բացել գրոհող ստորաբաժանումների համար: Առաջադրանք կատարելիս Հունան Ավետիսյանը, վիրավոր վիճակում, իր դասակի մարտիկներով առաջինը բարձրացավ Դոլգայա լեռը, կրծքով փակեց թշնամու հրակնատը եւ ապահովեց գրոհի հաջողությունը: Այդ սխրանքի համար ավագ սերժանտին շնորհվեց (հետմահու) Խորհրդային Միության հերոսի կոչում (1944 թվականի մայիսի 16-ին): Խորհրդային Միության զինված ուժերի նախարարի հրամանով Հունան Ավետիսյանի անունն առհավետ գրանցված է 89-րդ Հայկական հրաձգային դիվիզայի 390-րդ հրաձգային գնդի 1-ին վաշտի անձնակազմի ցուցակում: Հերոսաբար նահատակվածի աճյունն ամփոփված է Նովոռոսիյսկի շրջանի Վերխնի-Բականսկ բանավանի եղբայրական գերեզմանում:

Դեռեւս անցյալ տարվանից ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանի նախաձեռնությամբ եւ օժանդակությամբ մշակվել եւ իրականացվում է միջոցառումների շարք (ֆիլմի նկարահանում, հերոսի կիսանդրու տեղադրում, հիշատակի ոգեկոչում եւ այլն) Հունան Ավետիսյանի հիշատակը հավերժացնելու նպատակով: Հունիսի 19-ին սկսվեցին ոգեկոչման արարողությունները: Մարգկենտրոնի Վազգեն Սարգսյանի անվան զբոսայգում, որտեղ կանգնեցված է նահատակի հուշարձանը, փողային նվագախումբը քայլերգեր էր հնչեցնում: Հուշակոթողի մոտ հավաքվել էին երկրորդ աշխարհամարտի մասնակիցներ, հյուրեր Ռուսաստանի Դաշնությունից եւ մայրաքաղաքից, պատվիրակություն Արմավիրի մարզի Լուկաշին ավանից, որտեղից Ավետիսյանը մեկնել է ռազմաճակատ, հերոսի որդին՝ Հենզել Ավետիսյանը, Հ.Ավետիսյանի թոռները, բանակում ծառայող ծոռը: Հուշարձանի պատվանդանին ծաղկեպսակներ դրվեցին մարզային եւ քաղաքային իշխանությունների, ՀՀ պաշտպանության նախարարության եւ Կապանի պատերազմի վետերանների խորհրդի, Արցախյան ազատամարտի մասնակիցների կողմից: Տարբեր տարիքի եւ զբաղմունքի մարդիկ հուշարձանի պատվանդանին ծաղիկների խոնարհումով արտահայտեցին իրենց հարգանքը:

Այնուհետեւ հանդիսության մասնակիցները շարժվեցին դեպի Կապանի մշակույթի կենտրոն, որի մեծ դահլիճում տեղի ունեցավ ՀՀ պաշտպանության նախարարության պատվերով նկարահանված «Անմահության բանաձեւը» տեսաֆիլմի ցուցադրումը: Այն բովանդակում էր Հունան Ավետիսյանի կյանքի անցած ուղին մանկությունից մինչեւ նահատակություն: Ժամանակ առ ժամանակ էկրանից հնչում էին նրա տարեկիցների հուշերը, մեր ժամանակակիցների գնահատականի խոսքերը: Հերոսի որդին՝ Հենզել Ավետիսյանը, պատմում է, որ երկու ամսական էր, երբ հայրը մեկնեց ռազմաճակատ: Տխուր է, որ այդպես էլ չվայելեց հայրական գուրգուրանքը: Բայց նաեւ հպարտ, որ հայրը հերոսի կոչմանն է արժանացել: Տեսաֆիլմը հարուստ էր վավերագրական կադրերով, որոնք վերակենդանացնում էին երկրորդ աշխարհամարտի արյունալի իրադարձությունները: Տեսաֆիլմում հառնում է հերոսի մոր՝ Խանում մայրիկի կերպարը: Աշխատավոր կինը, ով ամուսնու վաղաժամ մահվանից հետո, միայնակ մեծացրել է զավակներին, վեց որդի է ճանապարհել Մեծ հայրենականի ռազմադաշտեր, որոնցից չորսն այդպես էլ չվայելեցին մեծ հաղթանակի բերկրանքը…

Կինոդիտումից հետո տեղի ունեցավ քննարկում: Ֆիլմն արժեւորեցին եւ հերոսի մասին գնահատանքի խոսք ասացին Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը, Կապանի N6 հիմնական դպրոցի տնօրեն Մարինե Դավթյանը, Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը, ՀՀ մշակույթի փոխնախարար Ներսես Տեր-Վարդանյանը: Նրանց ելույթներում նաեւ այն միտքը հնչեց, որ տեսաֆիլմը, անշուշտ, կնպաստի դեռահասների ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Ի դեպ, հայտնվեց, որ ֆիլմի մեկական օրինակ հանձնվելու է հանրակրթական դպրոցներին եւ զորամասերին: «Հունան Ավետիսյան» հիմնադրամը հուշամեդալներ էր սահմանել, որով պարգեւատրվեցին ֆիլմի նկարահանող խմբի անդամները: Գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանը մեծարանքի խոսք հնչեցրեց ֆիլմի հովանավորներ, հասարակական գործիչ եւ բարերար Հրաչյա Պողոսյանի եւ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանի հասցեին: ՀՀ պաշտպանության նախարարի մեդալների եւ պատվոգրերի արժանացան գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանը, Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը՝ հերոսի ծննդյան 100-ամյակի միջոցառումների կազմակերպմանը եւ անցկացմանը գործուն մասնակցության համար: Հ.Ավետիսյանի 100-ամյակի առթիվ ՀՀ երկրապահ կամավորական միության ուղերձը հրապարակեց միության վարչության անդամ Հակոբ Հակոբյանը, ով միության մեդալներով պարգեւատրեց մի խումբ ազատամարտիկների: Հենզել Ավետիսյանը երախտագիտության խոսք ուղղեց բոլորին՝ հոր հիշատակը հավուր պատշաճի հարգելու համար:

Հանդիսությունների երկրորդ օրը սկսվեց Բաղաբուրջի հուշահամալիր այցելությամբ, որտեղ հարգանքի տուրք մատուցվեց Հայրենական մեծ պատերազմում եւ Արցախյան գոյամարտում ընկածների հիշատակին: Այնուհետեւ մեքենաների շարասյունն ուղղվեց դեպի Հ.Ավետիսյանի ծննդավայր՝ Ծավ գյուղ: Հյուրերին դիմավորեցին աղուհացով: Առաջին հանգրվանը Ծավի միջնակարգ դպրոցն էր, որտեղ յոթնամյա կրթություն է ստացել ապագա հերոսը: Կրթօջախի տնօրեն Յուրա Մարտիրոսյանը տանտիրոջ իրավունքով երախտագիտություն հայտնեց Մուրազ Սարգսյանին՝ դպրոցի հանդեպ ցուցաբերած վերաբերմունքի համար: Վերջինիս օժանդակությամբ առաջին հարկում տեղադրվել է նահատակի կիսանդրին, հիմնանորոգվել է չորս դասասենյակ, հարստացվել օժանդակ նյութերով (այդ օրը նաեւ պաշտպանության նախարարության կողմից կրթօջախին նվիրաբերվեց երաժշտական կենտրոն): Ի դեպ, հիմնանորոգված դասասենյակներից մեկը՝ հայոց պատմության եւ հայրենասիրության դասարանը, կրում է Հունան Ավետիսյանի անունը:

Գլխավոր իրադարձությանը գյուղի՝ հուշահամալիրի վերածված հատվածում էր, որտեղ Հայրենական մեծ պատերազմում ընկած ծավեցի զինվորների եւ մերօրյա ազատամարտում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշակոթողների կողքին տեղադրվել է Հունան Ավետիսյանի կիսանդրին (քանդակագործ՝ Սուրեն Մելքոնյան): Այն պարուրող սավանն իջեցնելու պատիվը վերապահվում է Հենզել Ավետիսյանին եւ Հրաչյա Պողոսյանին: Վերջինս, ով Սանկտ Պետերբուրգից եկել էր այս արարողությանը մասնակցելու համար, Նեւայի ափին գտնվող քաղաքում բարեգործի համարում ունի: Իր պատմելով՝ սա Մեծ հայրենականում ընկած զինվորների հիշատակը հավերժացնող ութերորդ հուշարձանն է, որ կառուցվում է իր

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 8

Հրաչյա Պողոսյանը, Յուրի Կլյոնովը եւ Մուրազ Սարգսյանը

Քանդակագործ Ս. Մելքոնյանը կիսանդրու բացմանն է եկել ընտանիքի հետ

Աջից առաջինը՝ Հունան Ավետիսյանի որդին՝ Հենզել Ավետիսյանը

Հունան Ավետիսյանի կիսանդրին Ծավի կրթօջախում

Հունան Ավետիսյանի կիսանդրին Ծավ գյուղում

# Լրացավ 1-ին բանակային կորպուսի հիմնադրման 18-րդ տարեդարձը

**ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿ**

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

է 1996 թվականի հունիսի 21-ին, - իր խոսքում ասաց գնդապետ Փարվանյանը: - Կորպուսն անցել է մարտական փառավոր ուղի, հայոց բանակում ունի իր ուրույն, արժանավոր տեղը եւ վայելում է փառք ու պատիվ: Կորպուսն անցել է կայացման մեծ ճանապարհ եւ հասել ներկայիս արժանավոր մակարդակին՝ իր ստորաբաժանումներով: Պատահական չէ, որ բանակային կորպուսը կազմավորվեց Սյունյաց լեռնաշխարհում, կազմավորվեց ու կայացավ: Կայացավ, քանի որ տարածաշրջանը հերոսանալու մեծ կենսագրություն եւ փորձ ունի:

Հրամանատարը զորամիավորման ողջ անձնակազմին, քաղաքի հասարակայնությանը շնորհավորանքի խոսք հղելով միասնական եւ լավագույն աշխատանքի համար, շնորհակալություն հայտնեց այն զորամասերին, որոնք տարիների ընթացքում արժանացել են վաստակած գնահատանքի:

Գնդապետ Տիգրան Փարվանյանն առանձնահատուկ նշեց բանակային կորպուսի վարչակազմի, ստորաբաժանումների ու նրանց հրամանատարների անունները, ովքեր արժանացել են ՀՀ ՊՆ բարձր պարգեւների՝ բանակաշինության գործում ունեցած նշանակալի ծեռքբերումների եւ հայրենիքի սահմանները խիզախությամբ պաշտպանելու համար:

Հրամանատարն առանձնահատուկ շնորհավորեց եւ շնորհակալություն հայտնեց 1-ին բանակային կորպուսի առաջին հրամանատար, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովին:

Գնդապետ Փարվանյանը շնորհավորանքի եւ երախտիքի խոսք հղեց նաեւ բանակային կորպուսը նախկինում ղեկավարած գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանին, գեներալ-մայոր Լեւոն Երանոսյանին, գեներալ-մայոր Արշալույս Փայտյանին, գեներալ-լեյտենանտ Գարեգին Գաբրիելյանին, գեներալ-մայոր Պողոս Պողոսյանին, գեներալ-մայոր Կամո Աղաջանյանին՝ շեշտելով նրանց անուրանալի խիզախումն ու անմնացորդ աշխատանքը, ընդհանուր առմամբ՝ բանակաշինության եւ մասնավորապես՝ կորպուսի ներկա հաջողությունների, ձեռքբերումների եւ կայացման գործում:

1-ին բանակային կորպուսի հրամանատարը խոսքն ուղղելով զորամիավորման զինվորականությանը, կոչ արեց նրանց միշտ լինել հզոր եւ անկոտրում, վեհ ու խրոխտ՝ Սյունյաց լեռնաշխարհի պես, եւ ինչպես մեր քաջ նախնիներն են կտակել՝ եթե անհրաժեշտ լինի, սիրահոժար կյանքը զոհաբերել հայոց աշխարհի խաղաղության եւ հզորացման սրբազան գործին:

Գնդապետ Փարվանյանն իր խոսքն ավարտեց՝ հիշելով Արցախյան պատերազմում իրենց կյանքը հայրենիքին զոհաբերած քաջերին, հայոց երկնակամարին մաղթեց խաղաղություն, մեր անպարտ բանակին՝ խաղաղ ծառայություն:

Տարեդարձի առթիվ շնորհավորանքի եւ բարեմաղթանքի խոսք ասաց Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը:

– Սիրելի զինվորականներ, հավաստիացնում եմ, որ սյունեցիները միշտ ձեր կողքին են լինելու ցանկացած իրավիճակում եւ իշխանությունների հետ համախումբ՝ սրբորեն կատարելով իրենց բաժին հայրենասիրական պարտքը, - ասաց Սյունիքի մարզպետը:

Սյունիքի մարզպետը կորպուսին նվիրեց երեսուն հեռուստացույց:

Արցախի հերոս, ԵԿՄ վարչության նախագահ, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի շնորհավորանքի ուղերձն ընթերցեց ԵԿՄ վարչության անդամ Հակոբ Հակոբյանը՝ միաժամանակ հղելով իր շնորհավորանքի խոսքը:

Զինվորականությանն ու ժողովրդին օրհնանքի խոսք ասաց Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Հակոբյանը:

Հրամանների ընթերցումից հետո զորամիավորման լավագույն զորամասերին ու զինծառայողներին հանձնվեցին ՀՀ ՊՆ պարգեւներ:

1-ին բանակային կորպուսի տարեդարձի առթիվ շնորհավորանքի խոսք ասաց ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը: Նա բարձր գնահատելով բանակային կորպուսի անցյալ եւ ներկա ուղին, սյունեցիների հավատարմությունը՝ պետությանն ու բանակին, նրանց առանձնահատուկ զինվորապաշտությունը, դարերով կնքված քաջությունն ու հերոսականությունը, նվիրյալությունը՝ իրենց բնօրրանին, մասնավորապես ասաց.

- Հայ զինվորը ոգով ամուր է, քաջարի, վտանգի պահին՝ առնական: Հանդիսավոր այս օրն ինչպես չհիշենք ու չփառավորվենք՝ հիշելով հայոց բանակի ստեղծման հերոսական եւ լեգենդար պատմությունը, նրա քաջ զինվորներին, ավագ եւ երիտասարդ սպաներին:

Այսօր մեր հայրենիքի պաշտպանության գործը ստանձնում են անկախության միջավայրում մեծացած երիտասարդները, որը, հպարտանալու առիթ լինելուց զատ, նաեւ մեծ պատասխանատվություն է փորձառու, պատերազմի բովով անցած մեր ավագ եւ ռազմական ակադեմիաներում կրթված, մարտարվեստին բավականաչափ տիրապետող երիտասարդ սպաների համար:

Կարելի է վստահորեն ասել, որ ի դեմս 1-ին բանակային կորպուսի վարչակազմի, նրա ենթակա ստորաբաժանումների ունակ եւ կարգապահ զինվորականության, հայոց բանակն ունի լավագույն եւ առաջավոր, փորձառու եւ հարվածային, կայացած եւ օրեցօր ամրապնդվող զորական ուժ, որը, հակառակորդի կողմից պարտադրված նոր պատերազմի դեպքում, բանակ-ժողովուրդ ամուր կապի ու փոխադարձ վստահությամբ՝ իր կործանարար հարվածը կհասցնի թշնամուն, սրբությամբ կկատարի իր բաժին հայրենասիրական առաքելությունն ու մարտական ծրագրերը:

Նախարարն ամփոփելով խոսքը, ասաց.

- Քանի դեռ քաղաքացիական հասարակությունը բանակի թիկունքում է, հայոց բանակը միշտ հզոր, անպարտ եւ հաղթանակող է լինելու:

Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը մեկ անգամ եւս շնորհավորեց ու շնորհակալություն հայտնեց կորպուսի հիմնադրման ակունքներում կանգնած հրամանատարներին եւ զինվորներին՝ հարգանքի եւ խոնարհումի, հավերժ երախտիքի խոսք հղելով մեր հաղթանակի եւ հայրենիքի խաղաղության համար նահատակված քաջերի անմահ հիշատակին:

ՀՀ ՊՆ կողմից մի շարք լավագույն զինծառայողներ, բանակի հետ առնչվող քաղաքացիական անձինք արժանացան գերատեսչական պարգեւների:

ԵԿՄ վարչության կողմից Սյունիքի մասնաճյուղի նախագահ Սուրեն Խաչատրյանը տարբեր հուշամեդալներով պարգեւատրեց տասնմեկ զինծառայողի:

Թանկարժեք նվերներ հանձնվեցին ԼՂՀ ՊԲ հրամանատարության անունից:

1-ին բանակային կորպուսի հրամանատարի կողմից 80 լավագույն զինծառայող արժանացան պատվոգրերի եւ շնորհակալագրերի, տրվեցին կրծքանշաններ, հերթական կոչումներ եւ շնորհակալական նամակներ հղվեցին ժամկետային լավագույն զինծառայողների ծնողներին:

Ժողովրդի ծափողջույնների եւ հիացմունքի ներքո հանդիսավոր շարասյուներով անցան 1-ին բանակային կորպուսի ենթակա ստորաբաժանումները՝ իրենց հրամանատարական կազմով:

Նախարար Սեյրան Օհանյանը 1-ին բանակային կորպուսին հանձնեց հրամանատարական շտանդարտ:

Զորահանդեսն ավարտվեց զորամիավորման հատուկ ջոկատի ցուցադրական բարդ մարտավարական ելույթներով:

Միջոցառումը վարեցին քաղաքի Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի գեղմասվար Նելլի Արզումանյանը եւ ժամկետային զինծառայող Միեր Փարվանյանը, ասմունքեց 1-ին բանակային կորպուսի նախկին ժամկետային զինծառայող, պահեստազորի ավագ սպա Արթուր Գաբրիելյանը:

Փողային երաժշտությունն ապահովեց ՊԲ զինվորական նվագախումբը՝ կապիտան Ներիկ Գրիգորյանի ղեկավարությամբ:

Հնչեցին հայրենասիրական բանաստեղծություններ, նշանավոր ռազմական գործիչների մտքեր եւ ասույթներ:

Էկրանի վրա միջոցառման ողջ ընթացքում ցուցադրվեցին կադրեր 1-ին բանակային կորպուսի, նրա ենթակա ստորաբաժանումների հերոսական պատմության, զինվորականության մարտական առօրյայի մասին:

**ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ**

# Եվս մեկ հիշեցում Հրաչ Ջաբրայանին

Հայրենասիրությունը նախեւառաջ գործ ու առինքնող վարք է ենթադրում, իսկ հռետորաբանության վրա կարելի է եւ ժամանակ չվատնել

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

գործազուրկ վարորդներից մեկը՝ Վրեժ Առաքելյանը: Վարորդները հանդիպել են Հրաչ Ջաբրայանին եւ բացատրություն պահանջել՝ իբր վարորդների կողմից դիզվառելիքի շարունակական գողության մասին հնչեցրած ակնարկի վերաբերյալ: Հրաչ Ջաբրայանը, ըստ վարորդի, հրաժարվել է նախկինում ասված խոսքերից եւ հայտարարել, որ ինքը երբեք վարորդներին գողության մեջ չի մեղադրել, որ հայտնի հանդիպման ժամանակ այդ մասին խոսք չի եղել:

Վարորդը, այդուհանդերձ, նաեւ իր ընկերների անունից, անհիմն ու ստահոդ է համարում Հրաչ Ջաբրայանի՝ ապրիլի 10-ի հանդիպման ժամանակ հնչեցրած անթաքույց ակնարկը՝ իբր վարորդների կողմից ժամանակին կատարված գողությունների մասին:

Մեր զրուցակցի կարծիքով՝ գողության կամ գողության դատապարտման մասին ամեն ոք չէ, որ խոսելու բարոյական իրավունք ու նի: Հրաչը, ըստ էության, բարոյական իրավունք եւ հիմքեր չունի խոսել վարորդների եւ առհասարակ կապանցիների գողության մասին: Դեռ հարց է, թե ով է Կապանի կոմբինատում օրինականացված գողությամբ զբաղվում:

Ի՞նչ է, այնուամենայնիվ, տեղի ունեցել Կապանի կոմբինատի ավտոհավաքակայանում:

Ի սկզբանե յոթ վարորդ էր աշխատում ավտոբուսների վրա: Մինչեւ 2013թ. դեկտեմբերի 1-ը երկուսին ազատել են աշխատանքից՝ իբր դիզվառելիքի գողության համար, թեեւ հրամանագրքում նման ձեւակերպում չի արվել: Չորս վարորդ էլ այս տարվա փետրվարի 17-ին է աշխատանքից ազատվել: Ավելի ուշ աշխատանքից ազատել են եւս մեկին, ով հիվանդության պատճառով փետրվարի 17-ին աշխատանքի չէր ներկայացել:

Վերջին հինգ կրճատվածից մեկը, ըստ զրուցակցի, ինչ-որ ծանոթի նպաստավոր միջնորդությամբ, վերականգնվել է աշխատանքում:

Արդյունքում վեց հոգի կրճատվել ու դարձել է գործազուրկ:

Այդ ընթացքում վեց ավտոբուսից հինգը վաճառվել է, մնացել է մեկ ավտոբուս՝ երկու վարորդով:

Ավտոհավաքակայանը լուծարվելու կապակցությամբ վարորդներին տրվել է երեք ամսվա վճար:

Աշխատանքը կորցրած եւ գործազուրկ դարձած վեց վարորդից երեքը դիմել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ Վրեժ Առաքելյան, Նորիկ Բեգլարյան, Միշիկ Կոզմանով (Մարատ Գրիգորյանի եւ Արտուշ Վեզիրյանի հայցադիմումներից տեղյակ չենք):

Ի՞նչ են պահանջում ավտոբուսի վարորդները:

2010 թվականից աշխատել են ամբողջ ամսվա ընթացքում, բայց միշտ էլ վարձատրվել են 20-21 օրվա համար: Հիմա պահանջում են վարձատրություն ամսվա մյուս օրերի համար եւս:

Վարորդներն ասում են նաեւ, որ հանիրավի կերպով կրճատվել է իրենց գիշերավարձը՝ դրույքաչափի 150 տոկոսից դարձնելով 30 տոկոս:

Վերջին հանգամանքն ընկերության պատասխանատուները բացատրում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 184-ում 2010թ. հունիսի 26-ին կատարված փոփոխությամբ, ըստ որի՝ ժամային դրույքաչափից բացի վճարվում է հավելում՝ «գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար՝ ոչ պակաս, քան ժամային դրույքաչափի 30 տոկոսի չափով»:

Վարորդները, սակայն, Հրաչ Ջաբրայանին հիշեցնում են նույն օրենսգրքի հոդված 12-ի սահմանումը՝ **«Հետադարձ ուժ չի կարող տրվել գործատուների կամ քաղաքացիների իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգը սահմանող կամ խստացնող, գործատուների կամ քաղաքացիների գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաեւ նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին»:** Ասել է թե՝ Հրաչ Ջաբրայանը, անկախ օրենքի փոփոխությունից, իրավունք չուներ վերանայել գիշերային աշխատանքի համար հավելավճարի չափը, քանի դեռ չէին վերանայվել նախկինում կնքված աշխատանքային պայմանագրերը:

Իմիջիայլոց, ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 184-ում կատարված փոփոխությունից հետո մեկ տարի չորս ամիս (մինչեւ 2012թ. հունվար ամիս) գիշերային աշխատանքի համար վարորդներին վճարվել է դրույքաչափի 150 տոկոսի չափով հավելում:

Վարորդներն ասում են նաեւ, որ իրենք աշխատել են հանգստյան ու ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերին, ինչի համար եւս Հրաչ Ջաբրայանն իրենց հավելավճար պետք է տար, բայց չի տվել:

Ի վերջո, վարորդները կարծում են, որ իրենց աշխատանքը չի գնահատվել, որ Հրաչ Ջաբրայանը պետք է վերադարձնի իրենց հասանելիքը, որը, նախնական հաշվարկներով, կազմում է մոտ 40 մլն դրամ:

– **Կոմբինատն իրենցն է, իրենք էլ կարող են վաճառել ավտոբուսները, կրճատել աշխատատեղեր, թեեւ ավտոպարկի կրճատումն ու մի խումբ մարդկանց գործազուրկ դարձնելը ո՛չ հիմնավորված է, ո՛չ էլ բարոյապես արդարացված, բայց մեր կատարած աշխատանքի դիմաց չվարձատրելը կամայականություն է ու անօրինականություն,** – այդպես է մտածում Վրեժ Առաքելյանը:

Ի դեպ, ըստ զրուցակցի, այդ ընթացքում կրճատվել է «Կամազ» մեքենայի հինգ վարորդ նույնպես:

Եվ ամենատարօրինակը՝ 10-12 վարորդ կրճատած Հրաչ Ջաբրայանը հպարտությամբ հայտարարում է՝ ավտոհավաքակայանի կրճատման արդյունքում վեց նոր աշխատատեղ է ստեղծվել կապանյան մեկ այլ կազմակերպությունում:

Մեր օրերի համար, անշուշտ, վերը շարադրվածն այնքան էլ սովորական պատմություն չէ: Նախ՝ բարեգործի պատվանդանին տեղի-անտեղի ձգտող եւ ժամանակ առ ժամանակ ինչ-որ անհասկանալի ճառեր արտասանող, կապանցիների սոցիալական վիճակով իբր մտահոգ Հրաչ Ջաբրայանը մարդկանց հոգեկան տվայտանքների մեջ գցելու իրավունքը չուներ: Գոնե աշխատավարձի հարցում այսպիսի «ռազբորկաների» տեղիք նա չպետք է տար:

Երկրորդ, եթե իսկապես գողության համար չեն լուծարել ավտոհավաքակայանը, ապա ուրիշ ի՞նչ հիմնավորմամբ է կոմբինատի ղեկավարությունը դիմել այդ քայլին (չէ՛, մենք չենք հավատում շրջանառվող կարծիքին, որ դա արվել է ինչ-որ մեկին լավություն անելու նպատակով): Միգուցե տնտեսական արդյունավետության ակնկալի՞ք են ունեցել, ինչի համար եւ գնացել են այդ մարդկանց կրճատելու ճանապարհով: Եվ ուրեմն՝ ինչո՞ւ չբացել փակագծերը: Թե չէ այնքան էլ բարոյական ու տրամաբանական չէ մեր դժվարին օրերում իրենց հայրենի քաղաքում մարդկանց գործազուրկ դարձնելը եւ դրան զուգահեռ ու նրանց հաշվին մեկ ուրիշ ընտանիքի լավություն անելն ու բարձր գաղափարների մասին հռետորաբանելը:

Ինչեւէ, սպասենք դատարանի վճռին: Իսկ ս.թ. մարտին մեկնարկած դատական գործընթացը (նախագահությամբ Անահիտ Թումանյանի) այնքան էլ արդյունավետ չի ընթանում: Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ պատասխանող կողմը համառորեն չի ներկայացնում պահանջվող փաստաթղթերը, ինչն էլ առայժմ հնարավորություն չի տալիս ամբողջապես հիմնավորել հայցվորների պահանջի օրինականությունը:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# Գորիսում նշվեց Ակսել Բակունցի ծննդյան 115-ամյակը

Հունիսի 13-ին լրացավ հայ արձակի խոշորագույն ներկայացուցիչ Ակսել Բակունցի ծննդյան 115-ամյակը: Գրական հոբելյանի առթիվ մայրաքաղաքից, Արցախից ու Հայաստանի տարբեր մարզերից գրողի ծննդավայր էին ժամանել բազմաթիվ հյուրեր՝ գրական աշխարհի ներկայացուցիչներ, արվեստի ու մշակույթի գործիչներ, պաշտոնական անձինք՝ արժանին մատուցելու մեծ գրողի անվանն ու «մյուռոնի նման սրբազնագույն» գործին:

Հոբելյանական միջոցառումները մեկնարկեցին Ակսել Բակունցի կիսանդրու եւ ապա՝ խաչքար-հուշաղբյուրի մոտ ծաղկեդրման եւ հարգանքի տուրքի արարողությունով, այնուհետեւ շարունակվեցին գրողի տուն-թանգարանում, որտեղ Գորիսի կրթամշակութային կառույցների համատեղ ստեղծագործական ուժերով կազմակերպվել էր ցերեկույթ:

Ա.Բակունցի տուն-թանգարանը, հանձն առնելով հոբելյանական միջոցառման կազմակերպման հիմնական պատասխանատվությունը, հոգացել էր, որ գրողի ծննդյան օրը նշվի տոնական պատշաճ մակարդակով եւ մնայուն տպավորություններ պարգեւի բակունցասերներին:

Ցերեկույթը, որ վարում էին թանգարանում գործող «Միրհավ» գրական խմբակի անդամներ Մարիամ Բարխուդարյանն ու Արուս Հայրապետյանը, բացվեց սրտառուչ ասմունքով, այնուհետեւ ողջույնի տպավորիչ խոսք ասաց տուն-թանգարանի տնօրեն Վարդան Սարգսյանը՝ կարեւորելով մեծ գորիսեցուն ըստ արժանվույն մեծարելու, նրա գրական աշխարհում մշտապես լինելու անհրաժեշտությունը:

Գրողի ապրող-հարատեւող հիշատակը ոգեկոչող հոբելյանական ելույթներով հանդես եկան ՀՀԿ Սյունիքի մարզային խորհրդի նախագահ Ս.Խաչատրյանը, Գորիսի քաղաքապետ Ն.Ոսկանյանը, ՀԳՄ նախագահ է.Միլիտոնյանը, ԼՂՀ գրողների միության նախագահ Վ.Հակոբյանը, Ե.Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն Կ.Վարդանյանը, գրողի թոռնուհին՝ Ալլա Բակունցը, ՀՀ մշակույթի նախարարության հրատարակչական բաժնի պետ Ա.Ավանեսյանը, գրականագետ Թ.Մարությանը, ՀԳՄ Սյունիքի մասնաճյուղի նախագահ Ա.Ծատուրյանը եւ ուրիշներ:

Ցերեկույթի ընթացքում բակունցյան ընթերցումներով, քնարական ու երաժշտական առանձին կատարումներով հանդիսականներին ներկայացան Ա.Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցի սաները, «Միրհավ» գրական խմբակի ասմունքողները, Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի երգչուհիները, Ա.Սաթյանի անվան երաժշտական դպրոցի ժողգործիքների համույթը՝ գրական հարուստ ներշնչանքներ ու մշակութային հուզապրումներ փոխանցելով ներկաներին:

Միջոցառումը եզրափակվեց Գորիսի Վ.Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոնի պատրաստած փոքրիկ բեմականացումով, որ օրվա խճանկարի մեջ վերստեղծեց մթնաձորյան կոլորիտը՝ Բակունցի հանրածանոթ կերպարների նախնական նիստուկացով, բնաշխարհիկ հոգեբանությամբ, գունեղ միջավայրով ու լեզվամտածողությամբ:

Բակունցով, նրա գրարվեստի պայծառությամբ ու հմայքով լցված օրը համեմվեց ավանդական հյուրասիրությամբ՝ գրողի հայրենի տան գեղատեսիլ այգում կառուցված տաղավարում:

**Արուս Հայրապետյան**

## Կարծիք, էլի մի կարծիք

# Զրույց Կապանի քաղաքապետի հետ

**Հունիսի 13-ին Կապանի քաղաքային մշակույթի կենտրոնում տեղի է ունեցել քաղաքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի «Սիլուետ» պարային խմբի համերգը: Խմբում դպրոցական տարիքի երեխաներ են ընդգրկված:**

Մինչեւ նախավերջին պարը հիացած էի: Նախավերջին պարը հիասթափեցրեց ոչ միայն ինձ: Վերջին պարի առանձին դրվագներ՝ նույնպես:

Դպրոցական տարիքի հայուհին՝ իր պապի ու տատի, ծնողների, քրոջ ու եղբոր առջեւ պորտապար կամ հարեմի պար էր պարում:

Դա մի խայտառակ տեսարան էր: Դա հակաազգային ու հակամանկավարժական մի հանդես էր:

Ինձ այդ միջոցառմանն էր հրավիրել այդ կենտրոնի տնօրեն Ռուզաննա Ավանեսյանը, ում վերջում մոտեցա՝ վրդովմունքս հայտնելու: Նա պատասխանեց. դիմել է քաղաքապետարան, որ այդ համարները հանվեն համերգային ծրագրից, բայց չեն լսել: Ռուզաննա Ավանեսյանը խորհուրդ տվեց դիմել պարուսույցին: Նա էլ ասաց, որ դա ազգային պար է: Իսկ ես պնդեցի ու պնդում եմ, որ դա ազգայինի հետ որեւէ կապ չունի, որ դա հարեմի պար է՝ արեւելյան մոտիվներով, որը պատիվ չի բերում մեզ:

Կոչ եմ անում Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանին՝ գոնե այսուհետ երեխաներին հեռու պահել նման անամոթ տեսարաններից: Աշոտ Հայրապետյանի ուշադրությունը մի հարցի վրա էլ եմ հրավիրում: Այդ ի՞նչ նկարներ են կախված քաղաքի արեւելյան մուտքի մոտ: Եթե դա պայմանավորված է այդ տարածքում գտնվող կազինոյի գոյությամբ, ապա՝ ավելի վատ: Եթե կազինոն է պատճառը, ապա զվարճանքի այդ վայրն այդտեղից պիտի հանել: Օրը ցերեկով մենք մեր երեխաներին անառակություն ենք քարոզում, որ Կապանին պատիվ չի բերում:

Եթե կազինո գովազդող նկարները տեղադրված են քաղաքի վարչական տարածքից դուրս, ապա բարի եղեք դիմել Սյունիքի գյուղապետին, չէ՞ որ դա ուղղակի Կապանին է վերաբերում:

Քաղաքի կենտրոնում Արցախյան ազատամարտում նահատակված հայորդիների նկարներն ենք կախում, իսկ մուտքի մոտ՝ անառակություն քարոզող նկարներ: Այդպես չի լինում: Դրանք միմյանց բացասում են, դրանք անհամատեղելի են: Կամ նահատակների նկարները հանեք, կամ՝ անառակություն քարոզող նկարները:

**ԺԱՍՄԵՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**
**17 հունիսի 2014թ.**

# Ի պատասխան Ժասմենա Մարտիրոսյանի հոդվածի

**Գովելի է, որ Կապանում կան մարդիկ, ովքեր անտարբեր չեն մեր քաղաքի մշակութային կյանքի հանդեպ: Սակայն քննադատության է արժանի այն, որ մարդ պատկերացում անգամ չունենալով արվեստի, այս դեպքում՝ պարարվեստի, ազգային պարերի յուրահատկությունների մասին, իրեն թույլ է տալիս հրապարակավ քննադատել այն: Նախապես շնորհակալությունս հայտնելով «Զրույց Կապանի քաղաքապետի հետ» հոդվածի հեղինակին՝ Ժասմենա Մարտիրոսյանին, ես՝ որպես մասնագետ, որպես օպերայի եւ բալետի պետական ազգային ակադեմիական թատրոնի բալետի արտիստուհի, ինձ թույլ եմ տալիս չհամաձայնել հեղինակի կարծիքի հետ:**

Մասնավորապես, անընդունելի եմ համարում հեղինակի հետեւյալ տողերը. «Դպրոցական տարիքի հայուհին իր պապի ու տատի, ծնողների, քրոջ, եղբոր առջեւ պորտապար կամ հարեմի պար էր պարում»:

Տեղեկացնեմ Ձեզ, որ իմ կողմից բեմադրված պարն արաբական ազգային պար է, որտեղ բացակայում են պորտապարին բնորոշ տարրերը: Քանզի, պորտապարը, կամ հեղինակի բնորոշմամբ՝ «հարեմի պարը», այլ պարատեսակ է, որը բացակայում է մեր պարացանկից: Իմ բեմադրած պարի ակունքը ժողովրդա-բեմական պարն է՝ դասական բեմական լուծումներով: Ինձ համար շատ կարեւոր են մշակութասեր քաղաքացիների կարծիքները, բայց, երբ կարծիքը խիստ սուբյեկտիվ է եւ ոչ պրոֆեսիոնալ բնորոշում է տալիս հարեւան ժողովրդի ազգային պարի՝ վիրավորելով նրանց ազգային արժանապատվությունը, ես դա անթույլատրելի եմ համարում:

Մեկ անգամ եւս շնորհակալություն հայտնելով հոդվածի հեղինակին՝ սեփական կարծիքն արտահայտելու համար, միաժամանակ հորդորում եմ նրան՝ զերծ մնալ ծայրահեղ սուբյեկտիվ, իրականության հետ ոչ մի աղերս չունեցող որակավորումներից, նաեւ ստահոդ տեղեկատվությունից, թե իբրեւ Ռուզաննա Ավանեսյանն իրեն ասել է, որ ինքը դիմել է քաղաքապետարան՝ համերգից այդ պարային կատարումը հանելու համար, սակայն իրեն չեն լսել: Հարգելի՛ տիկին, ընդունեք հորդորս, որով կպահպանեք թե՛ Ձեր եւ թե՛ իմ՝ պարուսույցիս, բարի համբավը:

**ԳԱՅԱՆԵ ՎԱՐԴԻԿՅԱՆ**

# Անոնիմկա փարածող «haynews.am»-ը պետք է «անուսներիս» պարզաբանի իր իսկ օգտագործած «չատլախ» բառի իմաստը

Ս.թ. հունիսի 5-ին «haynews.am» կայքն ուշագրավ վերնագրով մի անոնիմկա է հրապարակել՝ «Սաղիտ վերացնիլու ենք, այ չատլախներ»:

37 թվականի ձեւաչափով հերթական հաչոցի իմաստը եւ թիրախը նույնն էր՝ ցույց տալ, որ ինչ-որ լուսավորյալներ պայքարում են Գորիսի քաղաքապետի աթոռի համար, բայց տգետներն իրենց բնորոշ արտահայտություններով ահաբեկություն են սերմանում…

Հոդվածը, ինչպես ասացինք, անստորագիր էր, ինչպես վերջին օրերի շատ հոդվածներ՝ Գորիսին առնչվող:

Հոդվածը, ինչպես ասացինք, տպագրվել է «haynews.am» կայքում: Այդ լրատվամիջոցը «henaran.am»-ից ու «ararum.am»-ից հետո հաջորդն էր, որ Գորիսի քաղաքապետի ընտրության նախօրեին փորձում էր քաղաքում մարդկանց հանել միմյանց դեմ՝ օգտագործելով յուրահատուկ բառապաշար:

Բայց քանի որ «haynews.am»-ն անոնիմկայում գործածել է մեզ համար ոչ լիովին հասկանալի «չատլախ» բառը, մենք փորձեցինք կայքի խմբագիր Անուշ Խեչոյանից ճշտել բառի իմաստը՝ նկատի ունենալով՝ եթե երիտասարդ տիկինն իր խմբագրած կայքում տեղ է տվել այդ բառին, ապա անպայման իմացել է մեր խոսակցականում հազվադեպ գործածվող բառի իմաստը…

Մինչեւ մեր եւ Անուշ Խեչոյանի հեռախոսազրույցին անդրադառնալն ասենք, ի դեպ, որ Գորիսում մինչ այդ էլ քանիցս ականջովս է ընկել «չատլախ» բառը: Ճիշտն ասած՝ չգիտենք, թե ինչ ծագում կամ իմաստ ունի այդ բառն առհասարակ, բայց Գորիսում այն օգտագործվում է շատ ստույգ իմաստով: Օրինակ, եթե մարդ անոնիմկա է գրում եւ տարածում, ապա եւ՛ հեղինակին, եւ՛ տարածողին Գորիսում անվանում են «չատլախ»: Եթե մարդ փողով թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ է առնում եւ դառնում գիտությունների թեկնածու, դոկտոր ու այդ կոչումների (աստիճանների) զորությամբ պաշտոն փախցնում՝ մնալով կիսագրագետ, ապա այդ մարդուկին նույնպես անվանում են «չատլախ»: Եթե մարդ մարզպետի մոտ «ստուկաչ է» աշխատում, ապա նրան դարձյալ «չատլախ» են անվանում: Եվ նման շատ օրինակներ:

Հայաստանյան լրատվամիջոցներում, որքանով մենք ենք ծանոթ, այդ բառը, այնուամենայնիվ, չեն օգտագործում: Առաջին անգամ հանդիպեցինք «haynews.am»-ում եւ փորձեցինք նրա խմբագիր Անուշ Խեչոյանից ճշտել բառի իսկական իմաստը եւ դրա գործնական կիրառման շրջանակները:

Սկզբից, մինչդեռ, փորձեցինք վերը նշված հոդվածի հեղինակի անուն-ազգանունը եւ ուշագրավ այդ բառի իմաստը ճշտել «haynews.am»-ի հիմնադիր Նարեկ Գալստյանից: Վերջինս ասաց, որ ինքը կայքի գործունեության հետ չի առնչվում, իսկ առաջացած հարցերի պատասխանը կարող է տալ կայքի խմբագիր Անուշ Խեչոյանը:

Հունիսի 12-ին զանգահարեցինք նրան: Տիկինը նախ հրաժարվեց ասել, թե ով է նախընտրական Գորիսին առնչվող անստորագիր հաչոցի հեղինակը:

-Դա հեղինակային հոդված է, եւ ես չեմ կարող հեղինակի անունը տալ՝ եթե նույնիսկ դատարան դիմեք, - մոտավորապես նման պատասխան տվեց խմբագիրը:

Հետո խնդրեցինք, որ ինքը պարզաբանի, ստուգաբանի, մեզ՝ «անուսներիս» հասկանալի դարձնի «չատլախ» բառը՝ նկատի ունենալով, որ այդ կայքի ընթերցողն ենք եւ ուզում ենք հասկանալ տվյալ գրվածքի իմաստն ամբողջությամբ:

Ինքն ասաց՝ որ այդ բառն օգտագործում են նաեւ Ազգային ժողովում:

Մենք էլ ասացինք՝ տեղյակ չենք, որ Ազգային ժողովում եւս այդ բառն օգտագործում են հրապարակավ: Իսկ եթե ձեր խմբագրած կայքում տեղ եք տվել այդ բառով համեմված հոդվածին, ապա բարի եղեք մեզ հասկանալի դարձնել բառը:

Ինչեւէ, Անուշ Խեչոյանը հրաժարվեց մեզ լուսավորել եւ պարզաբանել իր իսկ խմբագրած կայքում գործածված «չատլախ» բառի իմաստը: Եվ մեզ մեղադրեց բարձր ձայնով խոսելու, իրեն վիրավորելու, շանտաժի ենթարկելու մեջ՝ այդպես էլ չհասկանալով ո՛չ շանտաժ, ո՛չ վիրավորանք բառերի իրավական իմաստը:

Մենք նրան խնդրեցինք երկուսիս հեռախոսազրույցը, որ մեր համաձայնությամբ սկզբից ի վեր ձայնագրվում էր, մինչեւ առաջիկա երկուշաբթի հրապարակել «haynews.am»-ում: Խոստացա նաեւ՝ չհրապարակելու դեպքում հարցերը բարձրացնել այլ լրատվամիջոցի հարթակից:

Անուշ Խեչոյանը չի հրապարակել մեր հեռախոսային խոսակցությունը, եւ ստիպված ենք դրանք հնչեցնել մեր հարթակից:

Տիկին Անուշ Խեչոյան

Խնդրում ենք պատասխանել՝ ա) ո՞վ է Ձեր կայքի հունիսի 5-ի նշված անոնիմկայի հեղինակը, բ) ի՞նչ գաղափարներով եւ սկզբունքով եք առաջնորդվել, երբ Ձեր խմբագրած կայքում հրապարակել եք անոնիմկա, գ) ի՞նչ ասել է «չատլախ»: Դուք չեք կարող ասել՝ չգիտեմ: Եթե այդ բառը գործածել եք Ձեր կայքում, ուստի Ձեզ համար այն եւ՛ ծանոթ է, եւ՛ հասկանալի, եւ՛ հոգեհարազատ:

Սպասում ենք Ձեր պատասխանին:

Միաժամանակ՝ չենք կարող չարտահայտել մեր զարմանքը (նույնն ասել ենք նշված հեռախոսազրույցում)՝ ինչպե՞ս կարող է հարգանք ու պատկառանք առաջացնող (հասկանալի պատճառով) այդ ազգանունը կրող երիտասարդ տիկինն իր խմբագրած լրատվամիջոցում նման արտահայտություններ օգտագործել: Նման բառապաշարով հայ կինն ինչպե՞ս կարող է երեխա դաստիարակել:

Անուշ Խեչոյանի հետ հեռախոսազրույցից հետո Կապանից վերադառնում էի Գորիս: Ճանապարհին զանգահարեց «Սյունյաց երկրի» բարեկամներից մեկը, ով նույնպես մայրաքաղաքում կայքի խմբագիր է, եւ բարեկամաբար փոխանցեց ինչ-որ մեկի կողմից իրեն հաղորդած «մեսիջը». եթե Սամվել Ալեքսանյանը շարունակի Անուշ Խեչոյանից պահանջել հայտնի անոնիմկայի հեղինակի անուն-ազգանունն ու «չատլախ» բառի հրապարակային ստուգաբանումը, ապա մի նոր անոնիմկա էլ կտարածվի այն մասին, որ խմբագրի որդին պարբերաբար աշխատանքից ուշանում է: Մենք էլ պատասխանեցինք՝ այդ հնարանքի իսկությունը կարելի է մեկ րոպեում ստուգել եւ ճշտել: Ինչ վերաբերում է աշխատանքից պարբերաբար ուշանալուն, ապա Սյունիքում ընդամենը մեկ մարդ է, որ պարբերաբար ուշանում է աշխատանքից՝ դա Սյունիքի օրվա մարզպետն է:

Չե՞ք հավատում՝ կանգնեք մարզպետարանի մոտ եւ կտեսնեք, թե օրվա որ ժամին է պարոնն աշխատանքի հաճախում:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**
**18 հունիսի 2014թ.**

# Խմբագրության փոստից

## «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր պարոն Ալեքսանյանին

**Մեծարգո պարոն Ալեքսանյան**

Ես Ձեր թերթի ընթերցողներից մեկն եմ: Հարեւաններով հաճախ ենք հավաքվում եւ քննարկում «Սյունյաց երկրի» հերթական համարներում տպագրված նյութերից մեզ առավել հետաքրքրողները:

Թեեւ անձամբ երբեւէ Ձեզ հետ չեմ հանդիպել, բայց լավ ճանաչում եմ: Ճանաչում եմ թերթի էջերում Ձեր բազմաբնույթ, բազմաբովանդակ հոդվածներից, որոնցում ցայտուն կերպով արտացոլված են մարդուն բնորոշ հատկանիշները՝ արդարամտություն, ազնվություն, ճշմարտություն եւ ամենակարեւորը՝ իրերն ու մարդկանց իրենց անուններով կոչելու, իրական դեմքերով ներկայացնելու քաջություն ու համարձակություն: Հատկանիշներ, որոնք պարգեւում են ինձ ե՛ւ մեծ բավականություն, ե՛ւ հպարտություն: Այո՛, ես հպարտանում եմ, որ «Սյունյաց երկրում» կան լրագրողներ, մտավորականներ, ովքեր անտարբեր չեն մարդկանց հուզող խնդիրների նկատմամբ, համարձակորեն հանրությանն են ներկայացնում առկա մտահոգություններն այնպես, ինչպես որ կա:

Պարոն Ալեքսանյան

Հենց այս պահին կրկին հավաքվել ենք հարեւաններով ու քննարկում ենք «Սյունյաց երկրի» հունիսի 5-ի համարի 4-րդ եւ 5-րդ էջերում տպագրված հոդվածները:

«Կապկազ թամաշա», «Գորիս. ե՛ւ եղավ որոտ, ե՛ւ ձայներ, ե՛ւ փայլատակում, ե՛ւ երկրաշարժ» վերնագրով Ձեր հեղինակած հոդվածներն, ինչպես նաեւ Գորիսի պետական համալսարանի հայոց լեզվի դասախոս Միեր Քումունցի ուղղագրական եւ կետադրական սխալներով լեցուն հոդվածն իմ մեջ նոր զգացմունքներ առաջացրին: Դրանք զարմանքի եւ ամոթի զգացմունքներ են: Հավատացնում եմ Ձեզ, որ զարմանքս ամենեւին կապ չունի հոդված-

# «Աչքիս մեջ մազ փնտրեցին, մահացու խոցս չտեսան»

Տեսակետ

**ՇՉՈՐՍ ԴԱՎԹՅԱՆ**

**Բանասիրական գիտությունների դոկտոր, «Համո Սահյան ԳՄԿ» ՀԿ նախագահ**

**Հարգելի խմբագրություն**

Այս նամակը գրելու դրդապատճառներն այն հեռախոսազանգերն էին, որ ստացա ս.թ. մայիսի 8-ին՝ Ձեր թերթում տպագրված հարցազրույցից հետո: Ուղղակի պարտավոր եմ պատասխանել ոչ միայն Ֆելիքս Եղիազարյանին, այլ նաեւ թերթի ընթերցողներին: Իսկ նրանք Հայաստանի քաղաքացիներ են, ապրում են Գյումրիում, Վանաձորում, Կապանում, Սիսիանում, Երեւանում եւ, բնականաբար, անհանգիստ են իրենց երկրի եւ իրենց բնակավայրի ճակատագրի համար:

Անցած տարիների փորձը ցույց է տալիս, որ մեր հանրապետությունում մարզային կառուցվածքն իրեն չի արդարացնում: Կարծում եմ, որ այդ մասին գիտեն նաեւ հանրապետության ղեկավարները, իսկ մարզերի բնակիչները հոգնել են արդեն այդ երեւույթի մասին խոսելուց: Ի՞նչն է դրա պատճառը: Անցած եր կու տասնամյակներում մարզերում չձեւավորվեց բնակչության ընդհանրություն, որովհետեւ նախկին շրջանները հարյուրամյակների ընթացքում ձեւավորված էթնիկական, տնտեսական, սոցիալական, ռազմավարական, աշխարհագրական, պատմական միավորներ էին, այլ ոչ թե սոցիալիզմի կառուցվածքային հետեւանք: Միայն մի օրինակ: Հռոմի Սբ Մարիամ Եգիպտացի հայկական եկեղեցու բակում թաղված է նույն եկեղեցում հայերի խոստովանահայր եւ տպարանի տպագրիչ ու սրբագրիչ Զաքարիա վարդապետը (1611-1688): Նրա տապանաքարին գրված է՝ «Յիշատակ Զաքարիայ վարդապետի՝ որդոյ Ազամի ի գաւառէն Սիսիանայ ի գեղջէ Բնունեաց...»: Այսինքն՝ Սիսիան գավառի Բնունիս գյուղից է եղել վարդապետը, ոչ թե Սյունիքի կամ Զանգեզուրի մարզից: Նույնիսկ 400 տարի առաջ այդ երեւույթը զգացել են հեռավոր Հռոմի հոգեւոր հայրերը: Որովհետեւ ընդհանրություն չեն տեսել Սիսիանի ու նրա հարեւան շրջանների միջեւ:

Ոչ հեռավոր անցյալի պատմությունն էլ է այդ հուշում: 1920թ. ստեղծվեցին մի քանի շրջան ընդգրկող գավառներ, որոնք լուծարվեցին 1930-ին: 1950-ական թվականներին կազմավորվեցին օկրուգներ, որոնք ընդամենը մեկուկես տարվա կյանք ունեցան: Նմանատիպ մի կառույց էլ ստեղծվեց 1962թ. (տերիտորիալ-արտադրական վարչություններ), որը վերացվեց 1964թ.: Այս ամենը մի՞թե ոչինչ չի ասում մեր Ազգային ժողովի պատգամավորներին, պետական այրերին, նաեւ մամուլին ու հեռուստատեսությանը: Գուցե այժմյան մարզպետարանների հաստիքների սահմաններում վերականգնվե՞ն շրջանները (ինչ անուն ցանկանում են՝ թող դնեն դրանց): Բայց թող սիսիանցին իրեն սիսիանցի զգա, գորիսեցին՝ գորիսեցի, գավառցին՝ գավառցի, այլ ոչ թե սյունեցի կամ գեղարքունիքցի: Կամ՝ ինչ սկզբունքով էլ ձեւավորվի մարզպետարանի աշխատակազմը, ի վերջո, նրա աշխատողները լինելու են նրանք, ովքեր ապրում են մարզկենտրոնում, որովհետեւ Կապանից 100-140կմ հեռավորությունից սիսիանցին չի գնալու այնտեղ աշխատի՝ առանց ընտանիքի ու տարրական պայմանների, ոչ էլ մարզկենտրոնում տուն է կառուցելու, որովհետեւ չգիտի, թե քա նի ամիս է այնտեղ աշխատելու: Եվ վերջապես, ո՞վ է այն «հանճարեղ» մարզպետը կամ մարզպետարանի աշխատողը, որ կկարողանա ղեկավարել 100-ից ավելի բնակավայր եւ հոգալ մարդկանց հոգսերը:

Մյուս անհանգստացնող պա հը կապված է հանրապետությունում արմատական գերխնդիրների վճռման հետ: Նման հարցեր եղել են նաեւ խորհրդային տարիներին, ինչպես հեռավոր շրջանների բնակչության տեղաշարժի կանխումը եւ սահմանամերձ գյուղերի ամրապնդումը, գյուղատնտեսության նկատմամբ հոգատարությունը, մարդկանց բնակարաններով ապահովումը, միջգյուղային ճանապարհների բարեկարգումը, տրանսպորտային հաղորդակցության կատարելագործումը, ոռոգման համակարգի զարգացումը, բնակավայրերի ջրամատակարարումը եւ այլն, եւ այլն: Ըստ որում՝ այդ հարցերը վճռվում էին ամբողջ հայ ժողովրդի ուժերով (ինչպես Արփա-Սեւան համաժողովրդական կառույցը, Որոտանի կասկադի շինարարությունը եւ այլն): Մի՞թե սիսիանցիները կարող էին իրենց ուժերով կառուցել երեք հիդրոկայան, չորս ջրամբար, հորատել 50 կմ թունել:

Այսօր համաժողովրդական, համահայկական խնդիրներից ամենակարեւորն արտագաղթի կանխումն է: Բայց մի՞թե գոյություն ունի այդ կանխումն ապահովող շարժում կամ ղեկավարություն, կամ հստակ ծրագիր: Անշուշտ, արտագաղթը կանխելու ամենակարեւոր գործոնը Հայաստանում աշխատատեղերի ստեղծումն է, որն այնքան էլ հեշտ գործ չէ: Այսօր նրանք, ովքեր ոչնչացրին այդ աշխատատեղերը, ժողովրդին նոր դասեր են տալիս, փոխանակ գոնե ամաչեն ու ներողություն խնդրեն:

Սիսիան քաղաքում ժամանակին գործել է տրիկոտաժի ֆաբրիկա, բուժտեխնիկայի գործարան՝ հազարական աշխատատեղերով: Նույնքան մարդ էլ աշխատել է շինարարությունում, այդքան էլ՝ այլ բնագավառներում: Նույն տրիկոտաժի ֆաբրիկայի սարքավորումները վաճառեցին, արտադրամասերը թալանեցին ու ոչնչացրին, եւ ոչ ոք դրա համար պատասխանատվություն չկրեց: Մի՞թե այդ ֆաբրիկան, որտեղ թելը մանում, կտորը գործում ու կարում էին, մարդկանց պետք չէր: Մարդիկ եթե անգամ կոստյում չհագնեին, ապա մի՞թե առանց ներքնաշորի էին մնալու: Եվ Սիսիանի պատասխանատուներն այդ հսկա ֆաբրիկայի ավերակների կողքով հանրապետության նախագահին տանում ցույց են տալիս պանրագործարանի կաթի մշակման նախկին արտադրամասում տեղավորված մի քանի կարող բանվորուհիներից բաղկացած կոլեկտիվ՝ որպես իրենց ժամանակների խոշոր նվաճում: Իսկ ժամանակին նույն պանրագործարանը տարեկան արտադրում էր 2 հազար տոննա պանիր, որից 350-ը՝ շվեյցարական: Այժմ անասնագլխաքանակի 10-20 անգամ կրճատվելու հետեւանքով համարյա պանիր չեն արտադրում:

Հաճախ մտածում եմ, որ երկ րի վարչապետներից գոնե մեկը մի օր կկանչի գյուղատնտեսության, էկոնոմիկայի, ֆինանսների, էներգետիկայի նախարարներին եւ կհարցնի. «Սիսիանի էներգետիկ հզորությունը կազմում է 400 մլն խորանարդ մետր ջուր: Սիսիանն ունի 30 հազար հեկտար վարելահող եւ 60 հազար հեկտար ալպիական արոտ: Ինչպե՞ս է, որ չի կարողանում իր 25 հազար բնակչությանը նորմալ պահել»:

Վերեւներում փոխանակ այս հարցերի պատասխանները որոնեն, պաշտպանում են ներքեւների «նախաձեռնությունը»՝ Սիսիանը երիտասարդական (ոչ ավելի, ոչ պակաս) մայրաքաղաք հռչակելու մասին: Կարծես դրանով բարձրանալու է ժողովրդի կենսամակարդակը, կամ քաղաքի ավերակված փողոցները վերաշինվելու, իսկ ջրային հայելիները մաքրվելու են: Հայտնի չէ նաեւ, թե որտեղ են այդ երիտասարդները, երբ արտադրական ու շինարարական կազմակերպություններ եւ մեծաքանակ ուսանողներով ու աշակերտներով հաստատություններ չկան: Շատ գյուղերում դպրոցները փակման եզրին են:

Կամ՝ էլեկտրաէներգիան թանկացնում են: Ոչ ոք չի պարզաբանում, թե ինչու: Հայաստանում հարյուրավոր փոքր հէկեր են կառուցում: Ո՞ւմ հայտնի չէ, որ մեր երկիրն էլեկտրաէներգիայով ամենահագեցածն է: Այդ դեպքում ո՞ւմ են պետք այդ էլեկտրակայանները: Միայն նրանց տերերին, ովքեր հոսանքը միացնում են ընդհանուր համակարգին, հաշվիչ դնում եւ էներգիայի արժեքը գրպանում: Այսինքն՝ նրանց 1-2 մեգավատտ էներգիան համացանցում համարյա չի երեւում, բայց գումարը երեւում եւ հարստացնում է առանձին անհատների:

...Մի քանի խոսք ՁԼՄ-ների մասին: Չգիտես ինչու, հեռուստահաղորդավարներից շատերը հայոց լեզուն փորձաքար են դարձրել՝ հաստատելու լեզվահնչողության իրենց «անհատական ոճը»՝ բառերի առաջին վանկի շեշտադրությամբ: Ոչ թե Ամիրյա՛ն փողո՛ց, այլ Ա՛միրյան փո՛ղոց եւ այդպես շարունակ: Բովանդակության, թեմատիկայի առումով կարող են մեկ-երկու ժամ խոսել մարդկանց ոչինչ չտվող մի հարցի մասին, սակայն կենսական խնդիրների մասին (արտագաղթ, գյուղատնտեսություն, կառավարում եւ այլն) լռել:

Ամիսներով խոսում են, հեռուստաալիքներով քննարկում, վիճում, ասենք՝ Երեւանում Միկոյանի արձանի կանգնեցման մասին, սակայն ամբողջ ժողովրդի եւ իշխանությունների երեսը չեն փորձում դարձնել դեպի արտագաղթի ողբերգությունը: Այստեղ է, որ հիշում ես Մեծն Համո Սահյանի տողերը. «Աչքիս մեջ մազ փնտրեցին, մահացու խոցս չտեսան, իրենց աչքի առջեւ այրվեցի, բոցս չտեսան»:

Ստացվում է, որ Հայաստանում բոլոր մարզպետները, քաղաքապետերն ու գյուղապետերը հիանալի են աշխատում, որովհետեւ դեռ ոչ ոք գործերը ձախողելու կամ չարաշահումներ թույլ տալու համար աշխատանքից չի հեռացվել:

Կարծում եմ, որ թերթերը հաճախ ընկնում են զանազան սենսացիաների հետեւից՝ այդ ընթացքում թույլ տալով աններելի սխալներ: Ունենալով կեսդարյա լրագրային աշխատանքի փորձ, գտնում եմ, որ մամուլում, այդ թվում եւ Ձեր թերթում «Ազատ ամբիոնը», իմ հասկացությամբ, ազատություն է կուսակցական, պետական, ընկերական, թայֆայական եւ այլ ազդեցություններից, մինչդեռ այդ ամբիոնից հնչում են զրպարտություններ, որոնց հեղինակները պատասխանատվություն չեն կրում, իսկ թերթերն էլ զլանում են փաստերն ստուգել, որպեսզի զրպարտություն չհնչի նրանց էջերից՝ վնասելով հենց թերթի հեղինակությանը:

«Խորհրդային Հայաստան» թերթը, որի գլխավոր խմբագիրն էի, օրական լույս էր տեսնում 347 հազար տպաքանակով, բայց մենք ոչ ոքի չէինք վիրավորում, փորձում էինք մարդկանց իրենց սխալների մեջ համոզել, ուղղել նրանց: Միաժամանակ ոչ մի քննադատություն անհետեւանք չէր մնում, որեւէ աստիճանակարգում քննարկվում էր՝ համապատասխան եզրահանգումներով: Կարծում եմ՝ մամուլի մասին ՀՀ օրենքում պետք է հոդված մտցվի քննադատությունն անհետեւանք թողնելու համար մարդկանց պատասխանատվության ենթարկելու մասին:

**www.hraparak.am, 17 հունիսի 2014թ.**

---

# Վերապատրաստվում են կապանցի գրադարանավարները

ներից մեկում մատնանշված թայֆայական հարաբերությունների հետ, քանզի նման հարաբերությունները մեզ համար նորություն չեն, դրանք լինում են բոլոր ընտրությունների ընթացքում, բոլոր մարզերում ու համայնքներում:

Քննարկմանը մասնակցողներիս զարմանքի պատճառն անհանգստությունն էր մեր ուսանողների համար, ովքեր ունեն բանասիրական գիտությունների թեկնածու հռչակված նման դասախոս, ում գիտելիքները նույնիսկ տարրական դասարանների գիտելիքներին չեն հավասարվում: Եվ եկանք եզրահանգման, որ նման հաստատությունում այդպիսի մասնագետի ներկայությունը պատիվ չի բերում ոչ մեկիս:

Մեր զրույցի մասնակիցներից մեկն ասաց, որ այս տարի միջնակարգն ավարտող իր թոռնուհու ուսման շարունակությունը ծնողները որոշել են տեսնել վերը նշված համալսարանում, բայց հիմա այդ կողմնորոշումն անթույլատրելի են համարում:

Մենք մտահոգված ենք, որ Գորիսի բարձրագույն ուսումնական հաստատությունում ներգրավված են նման մասնագետներ, որն ամոթալի ենք համարում:

Ինչ վերաբերվում է Գորիսի պետական համալսարանի տնօրեն պարոն Յուրի Սաֆարյանին, անկեղծ ասած՝ մենք խղճում ենք նրան՝ իր ղեկավարած հաստատության հեղինակությունը վարկաբեկող նման մասնագետ ունենալու համար: Իմիջիայլոց, համալսարանի տնօրենը դեռ բացատրություն չի տվել, թե նման գիտելիքներով անձնավորությունը, թուրքերենի մասնագետն ի՞նչ հանգամանքների արդյունքում է դարձել հայոց լեզվի դասախոս:

**ՍՎԵՏԼԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**Մեղրի, 18 հունիսի 2014թ.**

«Կապանի հանրային գրադարանի արդիականացման եւ համակարգչավորման» ծրագրի շրջանակներում Կապանի գրադարանային միավորման թվով 10 աշխատակից հունիսի 16-27-ը վերապատրաստվում են Հայաստանի ամերիկյան համալսարանի գրադարանում, որպեսզի մինչ գրադարանի բացումը կատարեն առկա գրքային ֆոնդի թվայնացման աշխատանքներ: Գրադարանավարների համար երկշաբաթյա դասընթացները կազմակերպվել են «Քաունթերփարթ ինթերնեշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչության եւ Հայաստանի ամերիկյան համալսարանի ՀԲԸՄ Փափազյանի անվան գրադարանի կողմից: Գրադարանավարների ընտրությունը կատարվել է հարցազրույցի միջոցով, որն անցկացվել է Կապանում՝ ՀԱՀ գրադարանի տնօրեն Սաթենիկ Ավագյանի մասնակցությամբ: Դասընթացների ընթացքում մասնակիցները ձեռք կբերեն անհրաժեշտ գիտելիքներ եւ հմտություններ «ԿՈՀԱ» գրադարանային ծրագրով ավտոմատացված ծառայություններ մատուցելու համար: Նրանք կայցելեն ՀԱՀ-ի թվանշային գրադարան, որտեղ կծանոթանան թվայնացման աշխատանքներին եւ ձեռք կբերեն պրակտիկ հմտություններ գրադարանային նյութերի հետագա թվայնացման եւ պահպանման նպատակով: Կապանցի գրադարանավարները կտիրապետեն նաեւ առցանց տեղեկատվական ծառայություններ մատուցելու հմտություններին, միջգրադարանային համագործակցությանը Հայաստանի համահավաք քարտարան «ԱԼԵՖ»-ի միջոցով, կծանոթանան եւ հետագայում կանդամագրվեն Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումին /ՀԷԳԿ/, ինչը Կապանի գրադարաններին հնարավորություն կտա օգտվելու «eIFL-էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար» միջազգային գրադարանային ասոցիացիայի գիտական բազմաբնույթ էլեկտրոնային շտեմարաններից: Դասընթացների ընթացքում գրադարանավարների համար կընթերցվի նաեւ «Հեղինակային իրավունքը գրադարաններում» թեմայով դասախոսություն:

**http://www.kapan.am/**
**21/06/2014**

# Հունան Ավետիսյանի հոբելյանը

### Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 3

մեկենասությամբ: Ծավի համայնքի ավագանու հունիսի 3-ի որոշմամբ բարեգործին շնորհվում է Ծավի համայնքի պատվավոր անդամի կոչում: Որոշումը հրապարակում է Ծավի գյուղապետ Սեյրան Զաքարյանը՝ հընթացս համագյուղացիների անունից երախտագիտություն հայտնելով Հրաչյային:

Կրթօջախի դպրոցականները հանդես են գալիս գրական-երաժշտական համադրույթով՝ հնչեցնելով հայրենասիրական երգեր ու բանաստեղծություններ: Գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանը կիսանդրին տեղադրելու գործում ցուցաբերած աջակցության համար «ՀՀ զինված ուժեր-20 տարի» հուշամեդալով պարգեւատրում է մի խումբ ծավեցիների, խրախուսանքի են արժանանում «Հունան Ավետիսյան» հիմնադրամի տնօրեն Տիգրան Համբարձումյանը, ուրիշներ:

Հեռավոր Ծավում տեղի ունեցող արարողությանը մասնակցելու էր եկել Ռուսաստանի Դաշնության մշակույթի վաստակավոր աշխատող, պահեստի գնդապետ Յուրի Կլյոնովը, ով հրապարակեց անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջպառլամենտական վեհաժողովի խորհրդի գլխավոր քարտուղարի ուղերձը՝ հղված Հունան Ավետիսյանի կիսանդրու բացման հանդիսավոր արարողության մասնակիցներին: Նաեւ խորհրդի դիպլոմին արժանացան Մուրազ Սարգսյանը, քանդակագործ Սուրեն Մելքոնյանը, հասարակական գործիչ եւ բարերար Հրաչյա Պողոսյանը: Քանդակագործ Սուրեն Մելքոնյանը հայոց մեծերի (Ավետիք Իսկահակյան, Հրանտ Մաթեւոսյան, Տիգրան Պետրոսյան եւ այլք) քանդակներ է արել: Ասում է, որ Հունան Ավետիսյանի սխրանքի մասին լսել է դպրոցական տարիներից: Եվ հոգու պարտք է համարել կերտել նրա կիսանդրին:

Մի խոսքով, Ծավում այդ օրն իր նշանավոր զավակ Հունան Ավետիսյանի ոգին էր թեւածում…

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Մագնուս Կարլսեն. «Տաթեւը շատ գեղեցիկ էր եւ հիշեցրեց հայրենիքս»

ՖԻԴԵ-ի վարկանիշային աղյուսակի առաջատար, շախմատի աշխարհի չեմպիոն նորվեգացի Մագնուս Կարլսենը եւ աշխարհի գավաթակիր, շախմատի համաշխարհային օլիմպիադայի եռակի հաղթող Հայաստանի հավաքականի կազմում աշխարհի թիմային առաջնության չեմպիոն Լեւոն Արոնյանը հունիսի 23-ին Երեւանի «Գաֆեսճյան» կենտրոնի Խանջյան սրահում հանդիպեցին լրագրողների հետ: Առավոտյան շախմատիստներն ուղղաթիռով մեկնել էին Տաթեւի վանք:

*«Տաթեւը շատ գեղեցիկ վայր էր: Այն ինձ հիշեցրեց իմ հայրենիքը: Ես շատ բան չեմ տեսել Հայաստանում, որպեսզի կարծիքս հայտնեմ Հայաստանի մասին: Ես շատ տպավորված եմ շախմատի հանդեպ վերաբերմունքից այս երկրում: Դա, իսկապես լավ օրինակ է ամբողջ աշխարհի համար:*

*Օգոստոսին Նորվեգիայում կայանալիք օլիմպիադայում Հայաստանը լավագույն երկրներից է: Ես հույս ունեմ, որ այս տարի Նորվեգիայի համար նույնպես հաջող կլինի այդ մրցաշարը: Վերջին անգամ հայերի հետ երբ խաղացել ենք, պարտվել ենք:*

*Ես ինքս ինձ չեմ համարում այս դարաշրջանի ծնունդ: Իմ բախտը բերել է: Իմ հայրը լավ էր խաղում շախմատ: Նա ինձ սովորեցրել է առաջին քայլերը: Մնացած ամենը ես սովորեցի մրցումների փորձից, հետո էլ՝ համակարգչից: Ալյոխինի եւ Կապաբլանկայի ժամանակ էլ էին ասում, որ շախմատի վերջը եկել է: Կոմպյուտերացման այս դարում չեմ կարծում, որ շախմատը սպառվել է: Մեծամտություն կլինի Անանդին չհամարել արժանի մրցակից:*

*Առաջին անգամ Լեւոն Արոնյանին հանդիպել եմ 2004-ի մրցաշարում: Նա այն ժամանակ այդքան լավ չէր խաղում, որքան հիմա, բայց ես էլ 13 տարեկան էի: Առաջին խաղում նա ինձ հաղթեց: Իմ սիրտը կոտրվեց այդ ժամանակ: Հետո 2007-ի մրցաշարին նա ինձ դուրս թողեց պայքարից: Հետո շատ հետաքրքիր մրցաշարեր ունեցանք»*, – նշեց Մագնուս Կարլսենը:

Մագնուս Կարլսենը հունիսի 22-ին գործարար Ռուբեն Վարդանյանի, Acronis ընկերության եւ IdeA հիմնադրամի հրավերով ժամանել է Հայաստան: Շախմատի աշխարհի չեմպիոնին Հայաստանում հյուրընկալել է Հայաստանի հավաքականի առաջատար Լեւոն Արոնյանը:

**ՎԵՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**
**sport.news.am**

# Ֆեմա Ջհանգիրյան

Երկրային կյանքին հրաժեշտ է տվել Ֆեմա Միխայելի Ջհանգիրյանը: Ծնվել է 1936թ. դեկտեմբերի 22-ին Ղափան քաղաքում, լեռնագործի ընտանիքում: Սովորել եւ բարձր առաջադիմությամբ ավարտել է Ղափանի թիվ 3 ռուսական միջնակարգ դպրոցը: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի երեկոյան բաժինը, սակայն որոշ անհարմարությունների պատճառով ուսումը չի շարունակել:

1957թ. ընդունվել է Երեւանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի անասնաբուծական ֆակուլտետ եւ ավարտել 1962թ.՝ ստանալով անասնաբույծի որակավորում:

Բուհն ավարտելուց հետո գործուղվել է Ղափանի շրջանային անասնաբուժարան, որտեղ նախ աշխատել է որպես անասնաբույժ, իսկ այնուհետեւ՝ լաբորատորիայի բժիշկ-սերոլոգ:

1947թ. տեղափոխվել է աշխատանքի Ղափանի բուժմիավորման քաղաքային պոլիկլինիկա, որտեղ եւս աշխատել է որպես բժիշկ-սերոլոգ:

Որոշ ժամանակ անց տեղափոխվել է քաղաքային կենտրոնական հիվանդանոցի լաբորատորիա, որպես բժիշկ-սերոլոգ աշխատել մինչեւ կյանքի վերջը: Որտեղ էլ աշխատել է նա, կոլեկտիվի անդամների ու իրեն դիմողների վրա թողել է լավ մասնագետի, բարեհամբույր ու հոգատար մարդու տպավորություն:

Ամուսնացած է, ունի երկու դուստր:

Համեստ ու նվիրված անձնավորության, հմուտ բժշկի հիշատակը երկար կմնա ճանաչողների սրտերում:

**«Կապանի բժշկական կենտրոն»**
**ՓԲԸ**

**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ** Խորին շնորհակալություն եմ հայտնում Երեւանի «Մեդլայն կլինիկայի» բուժանձնակազմին, առանձնապես ուրոլոգ Վահրամ Հակոբյանին, գինեկոլոգներ Արսեն Ափոյանին եւ Լիլիթ Կուջոյանին՝ երկու վիրահատություն կատարելու, առողջությունս վերականգնելու եւ անշահախնդիր ու հոգատար վերաբերմունքի համար: Շնորհակալություն եմ հայտնում նաեւ ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ ցուցաբերած նյութական աջակցության համար:

**ՍԵԴԱ ՈՍԿԱՆՅԱՆ**
**Պայմանագրային զինծառայողի մայր, գ. Ուժանիս**

# Կարատեիստներն էլ վերադարձան մրցանակներով

### Մարզական

**Հունիսի 7-ին եւ 8-ին Թբիլիսիում կայացած շոտոկան կարատեի առաջնությանը մասնակցում էին անդրկովկասյան հանրապետությունների մարզիկները:**

Հայաստանի հավաքականի կազմում հաջողությամբ հանդես եկան արեւելյան մարտարվեստների ազգային լիգայի կապանյան մասնաճյուղի պատանի կարատեիստները: Իննամյա Սեւակ Հայրապետյանը եւ 16-ամյա Դիանա Զաքարյանը կումիտե ձեւում դարձան հաղթողներ, իսկ կատա ձեւում կանգնեցին պատվո պատվանդանի երկրորդ հարթակին: 12-ամյա Նարե Հովհաննիսյանը (կատա ձեւից) եւ 13-ամյա Էդմոնդ Մարտիրոսյանը (կումիտե ձեւից) դարձան երկրորդ մրցանակակիրներ, իսկ ութամյա Դավիթ Աղաբեկյանը (կումիտե ձեւից)՝ երրորդ մրցանակակիր (մարզիչներ՝ Արմեն Մինասյան եւ Մարիետա Առաքելյան): Վերջինս մարզում է կարատեիստների Սյունիքի համայնքի խումբը: Կապանցի մարզիկների՝ թբիլիսյան առաջնության մասնակցությունը հովանավորել էին Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը եւ Սյունիք համայնքի ղեկավար Սամվել Սարգսյանը: Ընդհանուր թիմային հաշվարկում Հայաստանի հավաքականը գրավեց երկրորդ տեղը՝ իրենից առաջ թողնելով միայն տանտերերին: Հաղթողներն ու մրցանակակիրները պարգեւատրվեցին մեդալներով եւ պատվոգրերով:

Նկարում՝ առաջնության աչքի ընկած կապանցի մարզիկներ Դիանա Զաքարյանը (ձախից), Սեւակ Հայրապետյանը, Նարե Հովհաննիսյանը:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**


**Այունյաց երկիր**

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գլխավոր խմբագիր՝
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

**Հասցե՝** Կապան, Շահումյան 20/32:
**Հեռախոս՝** (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
**Էլ.փոստ՝** syuniacyerkir@mail.ru
**Ինտերնետ՝** www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«**ԳՈՎԱՋԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ**» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 27.06.2014թ.: